

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2022/7**

ք. Երևան

«26» 10 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար էդգար Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոնսէլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Փափազյանի, որը գործում է «Կոնսէլ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

APPROVED BY N.A.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի 7.15 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

APPROVED BY N.A.

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 36 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Ա պետական եկամուտների կոմիտե»
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
02647057
Էդգար Գևորգյան


/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կոնսել» ՍՊԸ
ք. Երևան, Արարատյան 90/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 01539021

«Կոնսել» ՍՊԸ-ի տնօրեն՝
Արման Փափազյան



APPROVED BY N./

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄՆԱԿԱՍՏՈՒՅՑ*

Ը/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիր	Ը/մ	քանակը	պլանավորված առավելագույն գինը (<< դրամ)	կատարման ժամկետը
1.	<p>Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ</p> <p>5071100/507</p>	<p>Տեխնիկական բնութագիր</p> <p>ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչության Բազրատաշենի մաքսային կետ-բաժին</p> <p>Տեխնիկական բնութագրի</p> <p>ԱԱՀ1, ԱԱՀ2 և ԱԱՀ3</p> <p>1-ին հարկի կախովի առաստաղներում տեղադրված են ներածնան-արտածնան օդափոխության սարքավորումներ:</p> <p>Թարմ օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերում տեղադրված արտաքին ցանցերի միջոցով: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով: Սարքավորումները համալրված են 2-արագության օդափոխիչներով:</p> <p>Ներածվող օդի ջերմաստիճանը սենքերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°</p> <p>Տեղադրված է օդափոխության սարքավորում 4 ներածնան համակարգով:</p> <p>ԱՀ1, ԱՀ2, ԱՀ3 և ԱՀ4:</p> <p>1-ին /ԱՀ1, ԱՀ2/ և 2-րդ /ԱՀ3, ԱՀ4/ հարկի կախովի առաստաղներում տեղադրված են օդափոխության ուղղահոս ներածնան սարքավորումներ, որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ, հանդերձարաններ և չորանոցներ կոմպլեքսացնելու համար զրուգարաններից, լողասենյակներից, արխիվներից հեռացվող օդը, ինչպես նաև հագուստի չորացման համար:</p> <p>Ներածվող օդի ջերմաստիճանը սենքերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°</p> <p>Տեղադրված են օդափոխության համակարգի հետևյալ արտածնան սարքավորումները.</p> <p>ԱՀ1 ... ԱՀ22, ԱՀ25, ԱՀ26, ԱՀ28, ԱՀ29 և ԱՀ30</p> <p>1-ին հարկի սանիտացյանների և լողասենյակների կախովի</p>	դրամ	1	5000000	<p>Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը</p>

APPROVED BY N.A.

<p>ատաստաղներում, որպես արտաձման սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և հատակի միջև: Օդի արտաձումն իրականացվում է վերին գոտուց օդաբաշխիչների միջով: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:</p> <p>ԱՇ23, ԱՇ24</p> <p>2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտաձման սարքեր տեղադրված են կանալային 1-արագության խոհանոցային օդափոխիչներ: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և հատակի միջև: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:</p> <p>Առակա է օդափոխության սարքավորում 3 արտաձման համակարգով՝ բնական հարկադրումով</p> <p>ԲԱՇ1, ԲԱՇ2 և ԲԱՇ3</p> <p>2-րդ հարկի 3 արխիվների սենյակի օդի արտաձումը իրականացվում է շենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Աարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ:</p> <p>Նշված շենքերում օդը ներաձվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենյակի պատերի ստորին հատվածում:</p> <p>Ջեռուցում և օդորակում</p> <p>Շենքի սենյակներում ջեռուցում և օդի լավորակում ապահովելու նպատակով տեղադրված է Mitsubishi Electric ընկերության արտադրության VRF բազմագոտի համակարգեր CITY MULTI G5: 2-րդ հարկի աստիճանավանդակների, սանհանգույցների, հանդերձարանների, լվացքատան և միջանցքների ջեռուցման համար տեղադրված են էլեկտրական կոնվեկտորներ թերմոստատներով:</p> <p>Սենյակներում տեղադրված են առանձին կառավարմամբ կասետային տիպի օդորակիչներ: Ջերմաստիճանի կարգավորման համար օգտագործվում են պատի ստացիոնար կառավարման վահանակներ: Արտաքին բյուրերը տեղադրված են շենքի տանիքում:</p> <p>Սերվիսային սենյակների համար տեղադրված են առանձին Split - համակարգի օդորակիչներ, որոնց արտաքին բյուրերը նույնպես</p>	
--	--

	<p>տեղադրվում են տանիքում: Սերվերների անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է օդորակիչ սարքերի 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է ռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պրնե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:</p> <p>Կաթսայատուն</p> <p>Առկա է 2 կաթսայատուն՝ տանիքում, որոնք տեղակայված են տանիքի աջ և ձախ մասերում. աջ կողմի կաթսայատանը տեղադրված է պատից կախվող, տուրբո 3 գազի կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32կվտ հզորությամբ, իսկ ձախ կողմի կաթսայատունը տեղադրված է պատից կախվող, տուրբո 4 գազի կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32կվտ հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման համակարգով: Կաթսաների աշխատանքային ճնշումը կազմում է 4 բար: 2 կաթսայատներն ապահովում են շենքի տաք ջրամատակարարումը՝ 2 ծավալային ջրատաքացուցիչների միջոցով, որոնք տեղադրված են աջակողմյան կաթսայատանը և ունեն յուրաքանչյուրը 400լ տարողություն, 36կվտ հզորություն, և ձախակողմյան կաթսայատան 2 ծավալային ջրատաքացուցիչների միջոցով՝ յուրաքանչյուրը 500լ տարողությամբ, 43կվտ հզորությամբ: Տաք ջրամատակարարում իրականացվում է նաև տեղադրված արևային մարտկոցներից: Ձախակողմյան կաթսայատանը տեղադրված է 1 ջրի բաք՝ 400լ տարողությամբ, 21կվտ և 20կվտ հզորությամբ, 2 ջերմափոխանակիչով՝ համատեղելու համար արևային ջրատաքացուցիչ մարտկոցների հետ: Տանիքին տեղադրված է 3 արևային ջրատաքացուցիչ մարտկոց՝ 2.51x2.35 մ տարածքով: Ցուրաքանչյուր կուտակիչ ջրատաքացուցիչ համար առանձին տեղադրված է շրջանառու պոմպ առաջնային կոնտուրով:</p> <p>Կաթսայատան ջեռուցումը իրականացվում է պանելային ռադիատորներով:</p> <p>Տաք ջրամատակարարում</p> <p>Շենքի տաք ջրամատակարարումն իրականացվում է տանիքի աջ և ձախ մասերում տեղադրված կաթսայատներից և արևային կոլեկտորների միջոցով, որոնք նույնպես տեղադրված են տանիքում:</p>
--	---

		<p>ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժին Տեխնիկական բնութագիր</p> <p>ՆԱՀ1, ՆԱՀ2 և ՆԱՀ3 1-ին հարկի կախովի առաստաղներում տեղադրված են ներածնան-արտածնան օդափոխության սարքավորումներ: Թարմ օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերում տեղադրված արտաքին ցանցերի միջոցով: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով: Սարքավորումները համալրված են 2-արագության օդափոխիչներով: Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C° Տեղադրված է օդափոխության սարքավորում 5 ներածնան համակարգով: ՆՀ1, ՆՀ2, ՆՀ3, ՆՀ4 և ՆՀ5 1-ին (ՆՀ1, ՆՀ2) և 2-րդ (ՆՀ3, ՆՀ4, ՆՀ5) հարկի կախովի առաստաղներում տեղադրված են ուղղահոս ներածնան սարքավորումներ, որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ, հանդերձարաններ և չորանոցներ կոմպենսացնելու համար զուգարաններից, լողանենյակներից, արխիվներից հեռացվող օդը, ինչպես նաև հագուստի չորացման համար: Ներածվող օդի ջերմաստիճանը սենթերում սահմանված է. ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C° Տեղադրված են օդափոխության համակարգի հետևյալ արտածնան սարքավորումները. ԱՀ1... ԱՀ9 1-ին հարկի սանհանգույցների և լողանենյակների կախովի առաստաղներում, որպես արտածնան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օդափոխիչներ: Արտածվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտավող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է ճեղք դրան և հատակի միջև: Օդի արտածումն իրականացվում է վերին գոտուց օդաբաշխիչների միջով: Դեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով:</p>
--	--	--

APPROVED BY N.A.

		<p>ԱՀ30, ԱՀ31 և ԱՀ32 2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտաձման սարքեր տեղադրված և են կանալային 1-արագության խոհանոցային օդափոխիչներ: Արտաձվող օդը հեռացվում է տանիքի միջով: Արտաձվող օդի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված է 2սմ ճեղք դռան և իստակի միջև: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողքին գտնվող առանձին անջատիչի միջոցով: Առակա է օդափոխության սարքավորում 5 արտաձման համակարգով՝ բնական հարկադրումով ԲԱՀ1, ԲԱՀ2, ԲԱՀ3, ԲԱՀ4 և ԲԱՀ5 2-րդ հարկի սպասարկվող տարածքների՝ արխիվների սենքեր (ԲԱՀ1, ԲԱՀ12, ԲԱՀ13), պահեստներ և հավաքարարների սենյակներ (ԲԱՀ4, ԲԱՀ5) Արտաձմանը այս սենքերից իրականացվում է շենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Սարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ: Նշված սենքերում օդը ներածվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենքերի պատերի վերին հատվածում: Օդը ներածվում է պահեստի և հավաքարարի սենյակներ հատակի և դռան միջև 2.0սմ ճեղքով, իսկ արտաձվում տանիքից գլխանոցի տակով: Օդորակում Սերվերային սենյակների օդորակման համար տեղադրված Mitsubishi Electric ընկերության արտադրության առանձին ֆրիտ-համակարգի օդորակիչներով, որոնց արտաքին բլոկերը տեղադրվում են տանիքում: Սերվերային սենյակներում անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է օդորակման սարքավորումների 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է ռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պղնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:</p>
	<p>Ջեռուցում</p>	

				<p>Շենքում իրականացված է ջրային տաքացման համակարգ՝ T1/T2 , մեխանիկական շրջանառությամբ և 80-60°C ջրով՝ որպես ջերմակիր:</p> <p>Շենքի ջեռուցումը իրականացվում է պատից կախովի ավտոմատ, տուրբո գազի կաթսաներով: Շենքի ջերմային բեռը թափանցված է 2 մասի՝</p> <p>Ջեռուցումը իրականացվում է տանիքում համապատասխանաբար ձախ և աջ մասերում տեղադրված կաթսայատաններից:</p> <p>Տեղադրված են մետաղական պանելային ռադիատորներ՝ մեխանիկական փակող և կարգաբերող փականներով:</p> <p>Ձեռնհատարկում գտնվող տեխնիկական սենքերում ջեռուցումը իրականացված է էլեկտրական կոնվեկտորներով:</p> <p>Կաթսայատուն</p> <p>Արկա է 2 կաթսայատուն՝ տանիքում, որոնք տեղակայված են տանիքի աջ և ձախ մասերում:</p> <p>Ձախ մասի կաթսայատանը՝ տեղադրված է պատից կախովի տուրբո 5 գազի կաթսա՝ յուրաքանչյուրը 32 կ-կտ հզորությամբ: Աջ մասի կաթսայատանը տեղադրված է պատից կախովի տուրբո 3 գազի կաթսա՝ յուրաքանչյուրը 32 կ-կտ հզորությամբ: Կաթսաները համարված են ավտոմատ կառավարման համակարգով: Կաթսաների աշխատանքային ճնշումը կազմում է 4 բար:</p> <p>Ձախ մասի կաթսայատանը տեղադրված է 2 ծավալային ջրատաքացուցիչներ՝ յուրաքանչյուրը 400լ տառորությամբ և 33 կ-կտ հզորությամբ:</p> <p>Տաք ջրամատակարարում</p> <p>Շենքի տաք ջրամատակարարումը իրականացվում է 2 եղանակով: Ձախ կողմի տաք ջրամատակարարումը իրականացնվում է ձախակողմյան կաթսայատանը տեղակայված ծավալային ջրատաքացուցիչներից: Աջ կողմի տաք ջրամատակարարումը իրականացվում է լրկալ ծավալայի էլեկտրական ջրատաքացուցիչների միջոցով, որոնք տեղադրված են սանհանգուցներում կամ հավաքարարի սենյակում:</p>
				<p>ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչության Գոգավան-Պրիվիլյոյեի մաքսային կետ-բաժին</p> <p>Տեխնիկական բնութագիր</p> <p>ՆԱՀ1 և ՆԱՀ2</p> <p>1-ին հարկի կախովի ատաստաղներում տեղադրված են ներածնան-</p>

			<p>արտաձևան օրափոխության սարքավորումներ:</p> <p>Թարմ օրի ներածումն իրականացվում է արտաքին պատերում տեղադրված արտաքին ցանցերի միջոցով: Արտաձևվող օդը հեռացվում է տանիքի միջով:</p> <p>Սարքավորները համալրված են 2-արագության օրափոխիչներով:</p> <p>Տեղադրված է օրափոխության սարքավորում 3 ներաձևան համակարգով:</p> <p>ՆՏ1, ՆՏ2 և ՆՏ3</p> <p>1-ին (ՆՏ1, ՆՏ2) և 2-րդ (ՆՏ3) հարկերի կախովի առաստաղներում տեղադրված են ուղղահուս ներաձևան սարքավորումներ, որոնց օգնությամբ արտաքին օդը մաքրվում է կոշտ ֆիլտրերում, տաքացվում անհրաժեշտության դեպքում և մատակարարվում միջանցքներ և հանդերձարաններ և սենյեր՝ կոմպենսացնելու համար գուգարաններից, լողանելյակներից, արխիվներից, մեկուսարաններից և հավաքարարների գույքի սենյակներից լիեռացվող օդը:</p> <p>Տեղադրված են հետևյալ արտաձևան համակարգերը՝</p> <p>ԱՏ1 - ԱՏ11, ԱՏ13 - 22, ԱՏ24 - ԱՏ29</p> <p>1-ին և 2-րդ հարկի անհանգույցների և լողանելյակների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օրափոխիչներ: Արտաձևվող օդատարները բարձրացվում են տանիքից 1.0մ բարձր և ավարտվում գլխանցներով կամ դեֆլեկտորներով: Արտաձևվող օրի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված են ճեղքեր դռան և հատակի միջև (ճեղքի մակերեսը պետք է լինի առնվազն 0.02քմ): Օրի արտաձևան իրականացվում է վերին գոտուց օրաբաշխիչների միջով: Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի միջոցով:</p> <p>ԱՏ12 և ԱՏ23</p> <p>2-րդ հարկի խոհանոցների կախովի առաստաղներում, որպես արտաձևան սարքեր տեղադրված են կանալային 1-արագության օրափոխիչներ: Արտաձևվող օրատարները բարձրացվում են տանիքից 1.0մ բարձր և ավարտվում գլխանցներով: Արտաձևվող օրի կոմպենսացում ապահովելու նպատակով նախատեսված են ճեղքեր դռան և հատակի միջև (ճեղքի տարածքը պետք է լինի առնվազն 0.02քմ): Ղեկավարումն իրականացվում է լույսի անջատիչի կողմից գտնվող առանձին անջատիչի միջոցով:</p> <p>Առակա է օրափոխության սարքավորում 5 արտաձևան համակարգով՝ բնական հարկադրումով</p>
--	--	--	---

ԲԱՀՎ՝ ԲԱՀ10

- 1-ին հարկի գտնվող մեկուսարանների տարածքներ (ԲԱՀ1, ԲԱՀ2)
- 2-րդ հարկում գտնվող արխիվների սենյակեր (ԲԱՀ3- ԲԱՀ8)
- 2-րդ հարկում գտնվող պահեստից (ԲԱՀ9):
- 2-րդ հարկում գտնվող ՕՎԻՐ-ի ծառայողության ընդունարան (ԲԱՀ1010)

Արտածումն այս սենյակից իրականացում է շենքի կտուրում տեղադրված դեֆլեկտորների միջոցով: Սարքավորման բարձրությունը տանիքի մակերեսից կազմում է H=2.0մ:

Նշված սենյակերում օդը ներածվում է միջանցքից օդափոխիչ ցանցերի միջոցով, որոնք տեղադրված են այդ սենյակի պատերի ստորին հատվածում:

Սենյակերում օդի ջերմաստիճանը սահմանված է՝
ամռանը՝ +25 C°, ձմռանը՝ +20 C°

Օդի վալորրավում

Սերվերային սենյակների օդի լավորական համար տեղադրված են առանձին split-համակարգեր, որոնց արտաքին բլոկերը տեղադրվում են տանիքում: Սերվերային սենյակներում անխափան աշխատանք ապահովելու նպատակով նախատեսված է split-համակարգերի 100% պահեստավորում: Սարքավորման համաչափ մաշվածություն ապահովելու նպատակով նախատեսվում է նաև ռոտացիա, այսինքն՝ սարքավորման շահագործում հերթական ռեժիմով: Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պրնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագրակը հանդիսանում է R410a էկոլոգիապես մաքուր ֆրեոն:

Ջեռուցում

Շենքում տեղադրված է երկխողովակ ջրային տաքացման համակարգ՝ T1/T2 , մեխանիկական շրջանառությամբ և 80-60°C ջրով՝ որպես ջերմակիր:

Շենքի ջեռուցումը իրականացվում է պատից կախովի ավտոմատ, տուրբո գազի կաթսաներով:

Շենքի ջերմային բեռը թափանցված է 4 մասի.

- Ջեռուցումն իրականացվում է տանիքում ձախ և աջ մասերում տեղադրված պատից կախվող տուրբո գազի կաթսաներով:
- Տեղադրված են մետաղական պանելային ռադիատորներ՝ մեխանիկական փակող և կարգաբերող փականներով:

Տաք ջրամատակարարում

Նախատեսված է խմելու ջրի մատակարարումը իրականացնելու

	<p>մանրաթելային ամրակցումով PP-R երկու ներքող խողովակներով՝ յուրաքանչյուրը օժ75x12.5 չափսի: Տաք ջրամատակարարումն իրականացվում է էլեկտրական ծավալային ջրատաքացուցիչներով, դրոնք տեղադրված են ամհանգույցներում կամ հավաքարարի սենյակում:</p>		
--	--	--	--

* Վճարումն իրականացվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց:

** Մատուցման ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 օրացույցային օրվա ընթացքում,
բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ
Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ, առաջին մատուցման ժամկետը պահանջի ներկայացման օրվանից հաշված 20
օրացույցային օրվա ընթացքում:

*** Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի արժեքները ներառվում են ծառայությունների ընդհանուր գնի մեջ:

**** Փոխարինվող պահեստամասերը պետք է գտնվեն գործարանային չօգտագործված վիճակում, որոնց համար սահմանվում է 365 օր երաշխիքային
ժամկետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մոլլան Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011054013
02647057
Էրզայր Գևորգյան



APPROVED BY N.A.

ԿԱՏԱՐՈՂ

«Կոնսեյլ» ՍՊԸ
ք. Երևան, Արարատյան 90/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004714720100

ՀՎՀՀ 01539021
«Կոնսեյլ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Արսյան Փյունիգյան



Հ/Հ	Արտիկուլ	Տեխնիկական բնութագիր (ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վալսության Բագրատաշենի մաքսային կետ-բաժին, Հայաստան, 4104 Տավուշի մարզ, Բագրատաշեն համայնք)	Ծառայության առավելագույն միավորի գին (ՀՀ դրամ)
1.		Արտաքին բլոկի ստուգողական գնում թույլ թերությունների հայտնաբերում	13000
2.		Ներքին բլոկի ստուգողական գնում թույլ թերությունների հայտնաբերում	13000
3.		Արտաքին բլոկի վացում քիմիական նյութերով (1 մոդուլ)	28000
4.		Ներքին բլոկի մաքրում	23000
5.		Ներքին բլոկի ֆիլտրներ մաքրում	13000
6.		Ներքին բլոկի կոնրեցատի հեռացման համակարգի փչամաքրում	18000
7.		Էլեկտրական ուժային հանգույցների ձգում	13000
8.		Էլ պլատանների փչամաքրում փոշուց և աղտոտվածությունից	13000
9.		Նորածման սարքերի ստուգողական գնում թույլ թերությունների հայտնաբերում	13000
10.		Արտածման սարքերի ստուգողական գնում թույլ թերությունների հայտնաբերում	13000
11.		Նորածման սարքերի ֆիլտրների մաքրում	23000
12.		Արտածման սարքերի ֆիլտրների մաքրում	23000
13.		Ռեկրայեռատորների ստուգողական գնում թույլ թերությունների հայտնաբերում	13000
14.		Ռեկրայեռատորների մաքրում փոշուց և աղտոտվածությունից	23000
15.		VRF Օդորական համակարգի ռեժիմների փոխարինում և կառուցվածքում	18000
16.		VRF Օդորական համակարգի դիագնոստիկա	33000
17.		Սերվերային սենյակի ռոտացիոն սարքերի վերածրագրավորում	28000
18.		Սերվերային սենյակի ռոտացիոն սարքերի փոխարինում	23000
19.		Ֆրեոնի տարիանում համակարգից	58000
20.		Կառավարման վահանակ	94400
21.		Կոմպրեսոր MU <190866> փոխարինում	281600
22.		I/D սնուցման պլատա PLY <193214> փոխարինում	77200
23.		- ջերմակարգավորիչ փական MXZAI8WVEI <G> փոխարինում	68000
24.		օդամուղի շարժաթև -A18/24VR <G> <474099> փոխարինում	58000

25.	E12 851 640	ջերմակարգավորիչ փական <G> <474257> փոխարինում	75200
26.	E12 927 501	օդանւուրի շարժաթև-K <G> <474100> <488293> փոխարինում	56800
27.	E12 927 961	քառաքայլ փական <G> <474418> փոխարինում	117200
28.	E12 C18 961	քառաքայլ փական MXZ <G> <474414> փոխարինում	137600
29.	E12 C34 306	Թերմիստոր FD-VA <417026> փոխարինում	48200
30.	E12 C34 307	Թերմիստոր MUZ <G> <416154> փոխարինում	48200
31.	E12 D69 900	Կոմպրեսոր SNB130FGBHIT MXZ փոխարինում	422000
32.	E12 F10 900	Կոմպրեսոր SNB130FGBHIT MXZ փոխարինում	641600
33.	E12 F15 493	էլ. ճարժիչ <G> փոխարինում	56800
34.	E12 F20 493	էլ. ճարժիչ <G> <474059> փոխարինում	56800
35.	E12 F21 493	էլ. ճարժիչ <G> փոխարինում	56800
36.	E12 F24 493	էլ. ճարժիչ <G> <474061> փոխարինում	56800
37.	E12 F25 493	էլ. ճարժիչ <G> <474062> փոխարինում	56800
38.	E12 F28 501	օդանւուրի շարժաթև <G> <412344> փոխարինում	58000
39.	E12 F28 620	Ջերմափոխանակիչ <G> փոխարինում	370000
40.	E12 F28 900	Կոմպրեսոր <G> <474340> փոխարինում	713600
41.	E12 F54 493	էլ. ճարժիչ <G> <474063> փոխարինում	56800
42.	E12 F73 521	կորպուսի դետալ <474130> փոխարինում	46800
43.	E12 F95 095	կորպուսի դետալ <G> <416877> փոխարինում	24000
44.	E12 G10 309	Թերմիստոր <G> <473658> փոխարինում	47000
45.	E12 G10 493	- ջերմակարգավորիչ փականի կոճ <G> <488368> փոխարինում	50600
46.	E12 G11 301	օդանւուրի շարժիչ <279997> փոխարինում	137200
47.	E12 G12 451	էլ. Պլատա <279997> փոխարինում	408400
48.	E12 G12 900	- կոմպրեսոր <G> փոխարինում	626000
49.	E12 G16 301	օդանւուրի շարժիչ <473569> փոխարինում	192400
50.	E12 G16 307	- թերմիստոր <G> փոխարինում	47000
51.	E12 G16 308	Թերմիստոր <G> <473641> փոխարինում	48200
52.	E12 G16 309	Թերմիստոր <G> փոխարինում	47000
53.	E12 G16 490	էլեկտրամագնիսական կոճ <G> փոխարինում	50600
54.	E12 H14 440	էլ. Պլատա <G> փոխարինում	94000
55.	E12 H15 440	էլ. Պլատա <G> փոխարինում	94000
56.	E12 H17 452	կառավարման պլատա <G> փոխարինում	80800
57.	E12 H20 451	ինվերտերի էլ. Պլատա <G> <280007> փոխարինում	382000
58.	E12 H21 451	ինվերտերի էլ. Պլատա <G> <473556> փոխարինում	404800

59.	E12 J44 300	օդանուղի շարժիչ <G><473556> փոխարինում	120400
60.	E12 J53 440	էլ. Պլատա <G><472277> փոխարինում	94000
61.	E12 J55 440	- էլ. Պլատա <G> <472276> փոխարինում	94000
62.	E12 J55 452	կառավարման պլատա <G> փոխարինում	80800
63.	E12 J56 452	կառավարման պլատա <G> փոխարինում	80800
64.	E12 J63 308	Թերմիստոր <G> փոխարինում	47000
65.	E12 J63 309	Թերմիստոր <G><473662> փոխարինում	47000
66.	E12 J63 329	- էլ. Պլատա <G> <473685> փոխարինում	53200
67.	E12 J63 521	կորպուսի ղեկավար <G><474131> փոխարինում	43200
68.	E12 J69 301	օդանուղի շարժիչ փոխարինում	186400
69.	E12 J69 440	էլ. Պլատա <G><473820> փոխարինում	470800
70.	E12 J69 521	կորպուսի ղեկավար <G> փոխարինում	45600
71.	E12 N87 301	օդանուղի շարժիչ փոխարինում	143200
72.	E12 N87 451	հնվերտերի էլ. պլատա փոխարինում	376000
73.	E12 P45 451	հնվերտերի էլ. Պլատա <G> <473083> փոխարինում	404800
